ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 2-ից 5-ը Մադրիդում (Իսպանիայի Թագավորություն)՝ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Էրիկ Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

Շրջակա միջավայրի նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Մադրիդ (Իսպանիայի Թագավորություն)
2019թ. դեկտեմբերի 2-ից 5-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն՝ ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 25-րդ համաժողովին (COP-25)՝ նեառյալ բարձրաստիճան հատվածի հանդիպման առաջին մասին, Իսպանիայի թագավոր Ֆիլիպ VI-ի կողմից հրավիրված պաշտոնական ընդունելությանը և Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Կարևորելով անտառների դերը՝ կլիմայի փոփոխության համատեքստում» բարձրաստիճան հատվածի պանել քննարկմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

- Ս.թ. դեկտեմբերի 3-ին մասնակցել եմ «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի 25-րդ համաժողովի պատվիրակների պատվին Իսպանիայի թագավոր Ֆիլիպ VI-ի կողմից հրավիրված պաշտոնական ընդունելությանը:

Իսպանիայի թագավոր Ֆիլիպ VI-ի ինձ հետ մասնավոր զրույցում կիսվել է Հայաստանի մասին իր դրական տպավորություններով:

Ընդունելության ընթացքում Ֆիլիպ VI-ը ողջունել է «COP-25»-ի պատվիրակներին ու իր ուղերձը հղել մասնակից երկրները ներկայացնող պաշտոնյաներին:

- Ս.թ. դեկտեմբերի 5-ին մասնակցել եմ Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Կարևորելով անտառների դերը՝ կլիմայի փոփոխության համատեքստում» բարձրաստիճան պանել քննարկմանը, որին մասնակցում

էին նաև Իսպանիայի, Չիլիի, Էկվադորի, Պակիստանի, Եթովպիայի շրջակա միջավայրի և գյուղատնտեսության նախարարները:

Ելույթի ընթացքում ներկայացրեցի Հայաստանում իրականացվող անտառային քաղաքականության հիմնադրույթները՝ մասնավորապես նշելով, որ մեր երկրում տարվում է ուղղորդված պայքար ապօրինի անտառահատումների դեմ, ինչը վերջին ժամանակահատվածում արդեն տեսանելի արդյունքների է հանգեցրել:

Կարևորելով նաև Հայաստանի կենսաբազմազանության դերը համաշխարհային էկոհամակարգերում, ընդգծեցի իր տեսակի մեջ յուրահատուկ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի նշանակությունը՝ հավելելով, որ դրանում առկա կեսաբազմազանությունը եզակի է ու գտնվում է հատուկ պահպանության տակ: Նշեցի նաև, որ արգելոցը ներառում է կենդանա և բուսատեսակներ, որոնք պահպանվել են միայն մեր տարածաշրջանում:

Հանդիպման շրջանակներում ներկայացրեցի նաև անտառվերականգնման ուղղությամբ իրականացվող լայնածավալ աշխատանքները, որոնք իրագործվում են Փարիզյան համաձայնագրի լույսի ներքո:

- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմերի 25-րդ համաժողովի շրջանակներում Հայաստանի պատվիրակությունը ս.թ. դեկտեմբերի 4-ին հրավիրել էր տարածաշրջանային կառույցի անդամ երկրների ներկայացուցիչների քննարկում: Հայաստանը ՄԱԿ-ի Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների խմբի դեկտեմբեր ամսվա համակարգողն է:

Խմբի օրակարգում կոնվենցիայի բյուրոյում, օժանդակ մարմիններում և տարբեր կոմիտեներում տարածաշրջանային խմբի ներկայացուցիչների թեկնածությունների առաջադրման հարցերն էին: Խորհրդակցությունը վարում էր ՀՀ շրջակա միջավայրի նախարարի օգնական Հայրապետ Հակոբյանը: Կոնվենցիայի ներքո գործող մարմիններում Հայաստանը կունենա երկու ներկայացուցիչ:

Նրանց ընտրությունը կարևոր է կոնվենցիայի շրջանակներում ընթացող գործընթացներին լիարժեք մասնակցություն ունենալու համար:

Շրջակա միջավայրի նախարար

Էրիկ Գրիգորյան

Recoverable Signature

X

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092